ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՅՐ

(Խրիմի ալբոմից)

—

Խորին ցնծութեամբ նայում եմ, ինչպէս
Հարաւի արեւն զարնան երկնքում
Ժպտում է եւ, ջերմ սիրահարի պէս,
Երկրին առաջին համբոյր է ղրկում:

Եւ լոյս-համբոյրից ա՛յնքան ոսկեվառ
Ցընցւում, զարթնում է թրմրած բընութիւն,
Զարթնում է սիրով նոր կեանքի համար
Եւ զգում իր մէջ մի նոր զօրութիւն:

Հալչում է ձիւնը—սարալանջերից
Առագ, անհամբեր վազում դէս ու դէն.
Ցաղթուած արեւի հզօր շողերից,
Փախչում է ձրմեռն անզօր ու անզէն:

Եւ ես լրսում եմ մօտակայ ձորից,
Ինչպէս յորդացած, անհանգիստ գետակ,
Ազատ կարկաչով, դուրս եկած ափից,
Ասես, երգում է զարնան յաղթանակ:

Եւ մեղմ ծըփալով կենսաշունչ հովիկ
Գետակի պղտոր երեսն է շոյում.
Մեղմ յուզում ջրեր, օրօրում ալիք,
Եւ անոյշ սուլում դալար ափերում:

Եւ նորափըրթիթ ծաղիկներ գարնան
Գետակի ափին զըրաւի՛չ շարուած,
Ժըպտում են քընքոյշ, բուրում դուրեկան,
Հէնց նոր արեւից վառ համբոյր քաղած:

Օդն է մեղմանում, պարզւում է եթեր,
Երկրի երեսին ճախրում ծիծեռնակ.
Կանաչ են հագնում սարեր ու դաշտեր,
Գեղջուկին կանչում դէպի սուրբ վաստակ:

Խորին ցնծութեամբ նայում եմ, ինչպէս
Կեանքն է նորոգւում մայր-երկրի կըրծքին.
Եւ ջերմ, սըրտաբուղխ օրհնում եմ ես քեզ,
Կենսաբեր գարնան համբո՛յր առաջին:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ